Սույն պայմանագրի տիպային ձևերը մշակվել են ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող “Հայաստանում աշխատուժի զարգացման” ծրագրի շրջանակներում: Պայմանագրերի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Տիպային ձև N3

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

---------- « » ---------- 20---- թ.

(կնքման վայրը)

Գործատուի անվանումը (ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը), կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, օրը, ամիսը տարին, գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ գործատուի մշտական բնակության վայրը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի՝ օրենքով սահմանված պետական միասնական գրանցամատյանում գրառված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս

---,

համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը

որը գործում է ----------

կանոնադրության, լիազորագրի կամ այլնի

---

[1] **Սույն պայմանագրի տիպային ձևի առկայությունը որևէ կերպ չի կարող սահմանափակել գործատուի և աշխատանքի ընդունվող անձի (աշակերտի) իրավունքը՝ կնքելու ՀՀ աշխատանքային օրենսգրքով և այլ օրենսդրական ակտերով սահմանված պայմաններին համապատասխանող այլ պայմանագիր կամ իրենց հայեցողությամբ և փոխադարձ համաձայնությամբ՝ սույն տիպային ձևում առկա դրույթներն ամբողջությամբ կամ մասամբ, ներառելու կողմերի միջև կնքվելիք համապատասխան պայմանագրում:**

հիման վրա, մի կողմից, և

ֆիզիկական անձի ազգանունը, անունը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, տրման օրը, ամիսը, տարին կամ հանրային ծառայությունների համարանիշը, հաշվառման վայրը

այսուհետ՝ Աշակերտ, մյուս կողմից (համատեղ հիշատակման դեպքում երկուսը միասին՝ Կողմեր),

հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 201.1.-րդ հոդվածը, հաշվի առնելով Գործատուի մոտ աշխատանքի ընդունվելու Աշակերտի ձգտումը, Աշակերտի մասնագիտական ուսուցման անհրաժեշտությունը և այն կազմակերպելու Գործատուի պատրաստակամությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի մասին:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործատուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և պայմաններին համապատասխան, իր հաշվին կազմակերպել

այն մասնագիտության կամ որակավորման անվանումը, որով կազմակերպվում է մասնագիտական ուսուցումը

մասնագիտությամբ (որակավորմամբ) Աշակերտի մասնագիտական ուսուցումը (այսուհետ՝ Մասնագիտական ուսուցում), իսկ Աշակերտը պարտավորվում է անցնել Մասնագիտական ուսուցումը և դրա ավարտից հետո, առնվազն Պայմանագրով սահմանված ժամանակահատվածում, Գործատուի մոտ աշխատել այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ, որով անցել է Մասնագիտական ուսուցումը:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

2. Մասնագիտական ուսուցումը նպատակաուղղված է Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ կամ որակավորմամբ Աշակերտի գիտելիքների, հմտությունների, կարողությունների արդիականացմանը և (կամ) ձեռք բերմանը, դրանց կատարելագործմանը՝ Գործատուի մոտ տվյալ մասնագիտությամբ կամ որակավորմամբ կամ որոշակի պաշտոնում աշխատելու համար ներկայացվող պահանջներին Աշակերտի համապատասխանությունն ապահովելու համար:

3. Մասնագիտական ուսուցումը կարող է ներառել սույն կետում նշված մեկ կամ մի քանի բաղադրիչները, այն է՝ վերապատրաստում, վերամասնագիտացում, որակավորման բարձրացում, լրացուցիչ մասնագիտական ուսուցում, նոր մասնագիտության (կամ մասնագիտացման) ձեռք բերման համար ուսուցում:

4. Մասնագիտական ուսուցումը կարող է իրականացվել տեսական և գործնական պարապմունքների, դասընթացների միջոցով, ինչպես նաև դրանց զուգորդմամբ

Աշակերտին որոշակի այնպիսի աշխատանքային գործառույթներ կատարելու հնարավորություն ընձեռելով, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ կամ որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար մասնագիտական գիտելիքներ, գործնական հմտություններ և կարողություններ ձեռք բերելու ու դրանք կատարելագործելու համար:

5. Մասնագիտական ուսուցումն իրականացվում է՝

1) Գործատուի մոտ (Գործատուի գտնվելու վայրում կամ Գործատուի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի գտնվելու վայրում)՝

---------- հասցեում.

նշվում է Մասնագիտական ուսուցման վայրի հասցեն, եթե այն իրականացվում է Գործատուի մոտ

2) այլ վայրում, որն ուղղակի (անմիջականորեն) կամ անուղղակի գտնվում է Գործատուի կառավարման (ղեկավարման) կամ հսկողության ներքո՝

---------- հասցեում:

նշվում է Մասնագիտական ուսուցման վայրի հասցեն, եթե այն իրականացվում է այլ վայրում

III. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. **Գործատուն իրավունք ունի**՝

1) Մասնագիտական ուսուցումն իրականացնել

ա. ինքնուրույն՝ անձամբ կամ Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց միջոցով և (կամ) Մասնագիտական ուսուցումն իրականացնելու նպատակով իր կողմից ներգրավված այլ մասնագետների միջոցով,

բ. այլ կազմակերպության միջոցով, սակայն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով սահմանված որևէ վայրում,

2) ինքնուրույն որոշել Մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը, տեսական և գործնական պարապմունքների, դասընթացների ծրագրերը, թեմաները, Մասնագիտական ուսուցման ընթացքում կիրառվող անհրաժեշտ տեխնոլոգիաները և մեթոդները, Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի կողմից կատարման ենթակա աշխատանքային գործառույթները, բացառությամբ՝ երբ Մասնագիտական ուսուցումն իրականացվում է այլ կազմակերպության կողմից, որի դեպքում դրանք որոշվում են Գործատուի և տվյալ կազմակերպության միջև համաձայնեցված կարգով, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենքներով,

3) նշանակել Մասնագիտական ուսուցման մենթոր՝ վերջինիս կողմից իր փորձը, գիտելիքները և հմտություններն Աշակերտին փոխանցելու, Աշակերտի մասնագիտական զարգացումը խթանելու, տեսական և գործնական պարապմունքների, դասընթացների ընթացքում ուսուցանվող գիտելիքները և հմտություններն Աշակերտի կողմից յուրացնելն օժանդակելու, Աշակերտի Մասնագիտական ուսուցման գործընթացին աջակցելուն միտված այլ անհրաժեշտ գործողություններ իրականացնելու նպատակով,

4) վարել Մասնագիտական ուսուցման ընթացքում Աշակերտի հաճախումների մատյան՝ Մասնագիտական ուսուցման յուրաքանչյուր օրվա համար նշելով Աշակերտի ներկա կամ բացակա լինելը, իսկ Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացնելու դեպքում՝ տվյալ կազմակերպության հետ փոխհամաձայնեցված կարգով իրականացնել հսկողություն Մասնագիտական ուսուցման դասընթացներին, պարապմունքներին Աշակերտի մասնակցության նկատմամբ,

5) աշխատանքային կարգապահության և Գործատուի ներքին և անհատական իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման վերաբերյալ Աշակերտին տալ պարտադիր կատարման ենթակա բանավոր, գրավոր հանձնարարություններ, ցուցումներ և առաջադրանքներ,

6) Մասնագիտական ոսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա » պարբերությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում՝

ա. Աշակերտին տալ տեսական և գործնական առաջադրանքներ, հանձնարարել իրականացնել որոշակի աշխատանքային գործառույթներ, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ կամ որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար մասնագիտական գիտելիքներ, գործնական հմտություններ և կարողություններ ձեռք բերելու ու դրանք կատարելագործելու համար,

բ. աշխատանքային գործառույթների կատարման վերաբերյալ Աշակերտին տալ պարտադիր կատարման ենթակա բանավոր, գրավոր հանձնարարություններ, ցուցումներ և առաջադրանքներ, Աշակերտից ստանալ տեղեկություններ դրանց կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ,

գ. ցանկացած ժամանակ ստուգել Աշակերտին հանձնարարված աշխատանքների իրականացման ընթացքը, կատարված աշխատանքների որակը, առերևույթ թերություններ և (կամ) սխալներ հայտնաբերելու դեպքում՝ պահանջել Աշակերտից Մասնագիտական ուսուցման մենթորի կամ համապատասխան լիազորություններ ունեցող այլ անձի օգնությամբ ողջամիտ ժամկետում վերացնել այդ թերությունները և (կամ) ուղղել սխալները,

7) պահանջել Աշակերտից ներկայացնել տեղեկանք իր առողջական վիճակի մասին, եթե Մասնագիտական ուսուցման շրջանակներում՝

ա. Աշակերտը պետք է իրականացնի աշխատանքային այնպիսի գործառույթներ (կամ կարող է գտնվել այնպիսի վայրում), որոնց ընթացքում (որտեղ) կարող է ենթարկվել մասնագիտական ռիսկի գործոններին (արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոններին), որոնց ազդեցության պայմաններում աշխատելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն պահանջվում է առողջական վիճակի նախնական և (կամ) պարբերական բժշկական զննություն.

բ. Աշակերտը ներգրավվելու է գործունեության որոշակի ոլորտներում աշխատանքային այնպիսի գործառույթների կատարմանը, որոնցում զբաղված անձինք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության.

գ. աշխատանքային որոշակի գործառույթները կատարվելու են Օրենսգրքով սահմանված՝ գիշերային ժամերին.

դ. Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Աշակերտի տասնութ տարին չի լրացել,

8) սույն կետի 7-րդ ենթակետում սահմանված դեպքերում առողջական վիճակի մասին տեղեկանքը չներկայացնելու պարագայում, Աշակերտին չթույլատրել կատարել աշխատանքային գործառույթները կամ Մասնագիտական ուսուցման շրջանակներում գտնվել այն վայրում, որում Աշակերտը կարող է ենթարկվել մասնագիտական ռիսկի գործոններին կամ որում Աշակերտի գտնվելը կարող է առաջացնել վտանգ հանրային առողջության պահպանման տեսանկյունից,

9) Մասնագիտական ուսուցման ավարտից հետո Գործատուի մոտ աշխատանքի ընդունվելուց հրաժարվելու, այդ թվում՝ Պայմանագրի 24-րդ կետով սահմանված ժամկետում Աշակերտի մեղքով աշխատանքի չընդունվելու կամ աշխատանքի ընդունվելուց հետո Պայմանագրի 23-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում Գործատուի մոտ աշխատելու պարտականությունն Աշակերտի մեղքով չկատարվելու դեպքում, պահանջել Աշակերտից Պայմանագրի 25-րդ կետով նախատեսված կարգով ու պայմաններով Գործատուին հատուցել Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված Գործատուի կատարած փաստացի ծախսերը,

10) պահանջել Աշակերտից Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները կատարել բարեխղճորեն, չվնասել, չխոտանել, չփչացնել և չկորցնել Գործատուի, Գործատուի աշխատողների, քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց, Մասնագիտական ուսուցումն իրականացնելու նպատակով իր կողմից ներգրավված այլ մասնագետների կամ Մասնագիտական ուսուցումն իրականացնող այլ կազմակերպության գույքը, առանց Գործատուի թույլտվության Գործատուի գույքը չհանել Մասնագիտական ուսուցման վայրից, չդրսևորել այնպիսի վարքագիծ, որի հետևանքով կվտանգվեն Գործատուի աշխատողների կամ այլ անձանց կյանքն ու առողջությունը, կամ նրանց կյանքի և առողջության համար կստեղծվի իրական սպառնալիք,

11) պահանջել Աշակերտից պահպանել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջները, Գործատուի ներքին կարգապահական կանոնները,

12) Աշակերտին չթույլատրել գտնվել Մասնագիտական ուսուցման վայրում, եթե Աշակերտը գտնվում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ,

13) Մասնագիտական ուսուցման ավարտին Աշակերտից ստանալ իր կողմից նրան տրամադրած աշխատանքի միջոցները, սարքավորումները, գործիքները, ապրանքները, դրանց նմուշները, նյութերը, փաստաթղթերը և այլ իրերը, ուսումնառության նպատակով տրված դասագրքերը, ձեռնարկները և ուսումնական այլ նյութերը, աշխատանքի արդյունքում կամ Գործատուի գույքն օգտագործելիս ստացված պտուղները, արտադրանքը

և եկամուտը, բացառությամբ այն հումքի, կիսաֆաբրիկատների կամ այլ նյութերի, որոնք Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, Աշակերտի կողմից արդեն իսկ օգտագործվել և սպառվել են Մասնագիտական ուսուցման շրջանակներում աշխատանքային գործառույթների կամ գործնական առաջադրանքների կատարման նպատակով,

14) Պայմանագրի 39-րդ կետով սահմանված դեպքերում միակողանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց, (որի դեպքում Աշակերտի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պայմանագրի 20-րդ կետին համապատասխան),

15) Մասնագիտական ուսուցման ավարտից հետո Աշակերտին չընդունել աշխատանքի, եթե

ա. Մասնագիտական ուսուցման ընթացքում Աշակերտի բացակայության օրերի հանրագումարը գերազանցել է Պայմանագրի 10-րդ կետով սահմանված՝ Մասնագիտական ուսուցման ընդհանուր տևողության կեսից ավելին.

բ. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է Կողմերի համաձայնությամբ.

գ. Պայմանագրի 39-րդ կետի համաձայն Գործատուն միակողմանի հրաժարվել է Պայմանագիրը կատարելուց.

դ. Պայմանագրի կնքումից հետո, մինչ Մասնագիտական ուսուցման ավարտը, աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Գործատուի մոտ տեղի է ունեցել աշխատողների քանակի և (կամ) հաստիքների այնպիսի կրճատում, որի հետևանքով հնարավոր չէ Աշակերտին տրամադրել այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքը, որով Աշակերտն անցել է Մասնագիտական ուսուցումը,

16) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

7. **Գործատուն պարտավոր է՝**

1) նախքան Մասնագիտական ուսուցումը սկսելը, Աշակերտին տրամադրել Մասնագիտական ուսուցման նշանակության, Պայմանագրի 1-ին կետով սահմանված մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի բնույթի, դրան ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ տեղեկատվություն,

2) Աշակերտի հետ համաձայնեցնել Մասնագիտական ուսուցումը սկսելու և ավարտելու ժամերը, բացառությամբ, երբ Մասնագիտական ուսուցումն իրականացվում է այլ կազմակերպության կողմից,

3) Մասնագիտական ուսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա » պարբերությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում՝

ա. Աշակերտին ապահովել ուսումնառության համար անհրաժեշտ դասագրքերով, ձեռնարկներով և (կամ) այլ ուսումնական նյութերով,

բ. Աշակերտին ուսուցանել առնվազն այն նվազագույն հմտությունները և գիտելիքները, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ կամ որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար,

գ. Մասնագիտական ուսուցման ընթացքում ապահովել Աշակերտի հմտությունների և մասնագիտական գիտելիքների յուրացման և կատարելագործման, աշխատանքային փորձառություն ձեռք բերելու համար անհրաժեշտ և բարենպաստ պայմաններ,

դ. Աշակերտի՝ հաշմանդամություն ունեցող անձ հանդիսանալու կամ Մասնագիտական ուսուցման համար առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում, ապահովել խելամիտ հարմարեցումներ,

ե. Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի հետ անցկացնել գործնական այնպիսի պարապմունքներ, ինչպես նաև ընձեռել աշխատանքային որոշակի այնպիսի գործառույթներ կատարելու հնարավորություն, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ, որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար աշխատանքային փորձառություն, մասնագիտական գիտելիքներ և գործնական հմտություններ ձեռք բերելու ու դրանք կատարելագործելու համար,

զ. Աշակերտին մատնանշել այն առերևույթ թերությունները կամ սխալները, որոնք նա թույլ է տվել Մասնագիտական ուսուցման շրջանակներում աշխատանքային գործառույթները կատարելիս, բացատրել դրանց հնարավոր պատճառները, ներկայացնել այդ թերությունների կամ սխալների վերացման և (կամ) հետագայում բացառման համար անհրաժեշտ քայլերը, գործողությունները,

4) Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացնելու դեպքում, Աշակերտին երաշխավորել այդ կազմակերպության կողմից սույն կետի 3-րդ ենթակետի «բ»-«զ» պարբերություններով սահմանված պահանջների պահպանումը,

5) ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ Մասնագիտական ուսուցման վայրում Աշակերտի անվտանգության ապահովման և առողջության պահպանության համար,

6) նախքան Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտին որոշակի աշխատանքային գործառույթների կատարմանը ներգրավելը, ծանոթացնել աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին, Գործատուի ներքին կարգապահական կանոններին,

7) Մասնագիտական ուսուցման վայրում հնարավոր ռիսկի գործոնների առկայության դեպքում՝ այդ մասին տեղեկացնել Աշակերտին և իրականացնել անվտանգության ուսուցում և (կամ) հրահանգավորում,

8) Մասնագիտական ուսուցման վայրում հնարավոր ռիսկի գործոնների առկայության դեպքում՝ ըստ անհրաժեշտության, Աշակերտին ապահովել անհատական պաշտպանության միջոցներով,

9) Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտին որոշակի աշխատանքային գործառույթների կատարմանը ներգրավելիս՝ ապահովել Օրենսգրքի 244-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքի նորմալ պայմաններ,

10) Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի կողմից աշխատանքային գործառույթների իրականացումը կազմակերպելիս առաջնորդվել Օրենսգրքի 248-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերով սահմանված պահանջներով,

11) Աշակերտին վերաբերվել հարգանքով, հաշվի առնել նրա անհատական առանձնահատկությունները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Աշակերտի և Գործատուի աշխատողների, քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց միջև փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ ձևավորելու համար,

12) Մասնագիտական ուսուցումը կազմակերպել Պայմանագրի 10-16-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան,

13) Աշակերտի տասնութ տարեկանը լրացած չլինելու դեպքում, Մասնագիտական ուսուցումը կազմակերպելիս պահպանել Օրենսգրքի 17.1-ին և 257-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները,

14) Աշակերտին վարձատրել Պայմանագրի V բաժնում նշված չափով, կարգով, ժամկետներում և պայմաններին համապատասխան,

15) Մասնագիտական ուսուցման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան, Աշակերտի հետ կնքել աշխատանքային պայմանագիր կամ ընդունել Աշակերտին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտ՝ Աշակերտին ընդունելով այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի, որով Աշակերտն անցել է Մասնագիտական ուսուցումը, բացառությամբ Պայմանագրի 6-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

16) Մասնագիտական ուսուցման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Աշակերտին աշխատանքի չընդունելու, կամ Աշակերտի Մասնագիտական ուսուցմանը չհամապատասխանող այլ մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի ընդունելու դեպքերում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշակերտին ներկայացրել դրա պատճառների մասին գրավոր բացատրություն,

17) Պայմանագրի 25-րդ կետով սահմանված դեպքերում Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված իր փաստացի ծախսերի հատուցումը Աշակերտից պահանջելիս, Աշակերտի պահանջով վերջինիս ներկայացրել Աշակերտի Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված՝ իր կատարած փաստացի ծախսերը հիմնավորող փաստաթղթերը,

18) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

8. **Աշակերտն իրավունք ունի՝**

1) նախքան Մասնագիտական ուսուցումը սկսելը, Գործատուից ստանալ Մասնագիտական ուսուցման նշանակության, Պայմանագրի 1-ին կետով սահմանված մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի բնույթի, դրան ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ տեղեկատվություն,

2) պահանջել Գործատուից համաձայնեցնել Մասնագիտական ուսուցումը սկսելու և ավարտելու ժամերը, բացառությամբ, երբ Մասնագիտական ուսուցումն իրականացվում է այլ կազմակերպության կողմից,

3) Մասնագիտական ուսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա » պարբերությամբ սահմանված կարգով իրականացվելու դեպքում, պահանջել Գործատուից՝

ա. ապահովել ուսումնառության համար անհրաժեշտ դասագրքերով, ձեռնարկներով և (կամ) այլ ուսումնական նյութերով,

բ. ուսուցանել առնվազն այն նվազագույն հմտությունները և գիտելիքները, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ կամ որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար,

գ. Մասնագիտական ուսուցման ընթացքում ապահովել իր հմտությունների և մասնագիտական գիտելիքների յուրացման և կատարելագործման, աշխատանքային փորձառություն ձեռք բերելու համար անհրաժեշտ և բարենպաստ պայմաններ,

դ. հաշմանդամություն ունեցող անձ հանդիսանալու կամ Մասնագիտական ուսուցման համար առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում, ապահովել խելամիտ հարմարեցումներ,

ե. Մասնագիտական ուսուցման շրջանակներում իր հետ անցկացնել գործնական այնպիսի պարապմունքներ, ինչպես նաև ընձեռել աշխատանքային որոշակի այնպիսի գործառույթներ կատարելու հնարավորություն, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի 1-ին կետում նշված մասնագիտությամբ, որակավորմամբ Գործատուի մոտ աշխատելու համար աշխատանքային փորձառություն, մասնագիտական գիտելիքներ և գործնական հմտություններ ձեռք բերելու ու դրանք կատարելագործելու համար,

զ. մատնանշել այն առերևույթ թերությունները կամ սխալները, որոնք նա թույլ է տվել Մասնագիտական ուսուցման շրջանակներում աշխատանքային գործառույթները կատարելիս, բացատրել դրանց հնարավոր պատճառները, ներկայացնել այդ թերությունների կամ սխալների վերացման և (կամ) հետագայում բացառման համար անհրաժեշտ քայլերը, գործողությունները,

4) Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացնելու դեպքում, պահանջել Գործատուից ապահովել այդ կազմակերպության կողմից սույն կետի 3-րդ ենթակետի «բ»-«զ» պարբերություններով սահմանված պահանջների պահպանումը,

5) պահանջել Գործատուից ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ Մասնագիտական ուսուցման վայրում իր անվտանգության ապահովման և առողջության պահպանության համար,

6) պահանջել Գործատուից նախքան Մասնագիտական ուսուցման շրջանակներում որոշակի աշխատանքային գործառույթների կատարմանը ներգրավելը, իրեն ծանոթացնել աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին, Գործատուի ներքին կարգապահական կանոններին,

7) Գործատուից տեղեկանալ հնարավոր ռիսկի գործոնների մասին, դրանց առկայության դեպքում պահանջել Գործատուից իրականացնել անվտանգության ուսուցում և (կամ) հրահանգավորում, ըստ անհրաժեշտության իրեն տրամադրել անհատական պաշտպանության միջոցներ,

8) Գործատուից պահանջել ապահովելու Օրենսգրքի 244-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքի նորմալ պայմաններ,

9) Գործատուից պահանջել Մասնագիտական ուսուցման շրջանակներում իր աշխատանքային գործառույթների իրականացումը կազմակերպել Օրենսգրքի 248-րդ

հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան,

10) Գործատուից պահանջել իր հետ վերաբերվել հարգանքով, հաշվի առնել իր անհատական առանձնահատկությունները,

11) պահանջել Գործատուից Մասնագիտական ուսուցումը կազմակերպել Պայմանագրի 10-16-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան,

12) տասնութ տարեկանը լրացած չլինելու դեպքում՝ պահանջել Գործատուից Մասնագիտական ուսուցումը կազմակերպել Օրենսգրքի 17.1-ին և 257-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները պահպանելով,

13) ստանալ տեղեկատվություն, փաստաթղթեր և այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են Մասնագիտական ուսուցման շրջանակներում իր աշխատանքային գործառույթների պատշաճ և բնականոն իրականացումն ապահովելու, ստացված հանձնարարությունները, ցուցումները և առաջադրանքները, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված այլ պարտականությունները կատարելու համար,

14) Գործատուին ներկայացնել Մասնագիտական ուսուցման ընթացքում առաջացող խնդիրները, ինչպես նաև դրանց վերացման, Մասնագիտական ուսուցման արդյունավետության բարելավման, անհրաժեշտ կազմակերպատեխնիկական և այլ պայմաններով ապահովելու վերաբերյալ առաջարկություններ, դիմել Մասնագիտական ուսուցմանն առնչվող այլ հարցերով,

15) Գործատուի հանձնարարությամբ կամ թույլտվությամբ մասնակցել գործարար հանդիպումներին, խորհրդակցություններին, աշխատանքային քննարկումներին,

16) Գործատուից ստանալ վարձատրություն՝ Պայմանագրի V բաժնում նշված չափով, կարգով, ժամկետներում և պայմաններին համապատասխան,

17) պահանջել Գործատուից Մասնագիտական ուսուցման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իրեն ընդունել այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի, որով անցել է Մասնագիտական ուսուցումը՝ Օրենսգրքով սահմանված պահանջների համաձայն իր հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր կամ ընդունելով աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտ, բացառությամբ Պայմանագրի 6-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

18) Գործատուի կողմից Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը հատուցելու պահանջ ներկայացնելու դեպքում, Գործատուից պահանջել և ստանալ այդ ծախսերը հիմնավորող բոլոր փաստաթղթերը,

19) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

9. **Աշակերտը պարտավոր է՝**

1) պարտաճանաչ կերպով մասնակցել Մասնագիտական ուսուցման դասընթացներին, տեսական և գործնական պարապմունքներին, բարեխղճորեն կատարել իրեն տրված հանձնարարությունները, ցուցումները և առաջադրանքները, Մասնագիտական ուսուցման

շրջանակներում իրեն վերապահված աշխատանքային գործառույթները և Պայմանագրով ստանձնած այլ պարտականությունները,

2) ենթարկվել Գործատուի ներքին կարգապահական կանոններին (իսկ Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացնելու դեպքում՝ նաև այդ կազմակերպության կողմից Մասնագիտական ուսուցումն անցնող անձանց համար սահմանված վարքագծի կանոններին), պահպանել աշխատանքային կարգապահությունը, աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջները,

3) Գործատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել տեղեկություններ վերջինիս կողմից իրեն տրված բանավոր, գրավոր հանձնարարությունների, ցուցումների և առաջադրանքների կատարման ընթացքի և դրանց արդյունքների վերաբերյալ,

4) իր կողմից կատարվող (կատարված) աշխատանքներում առերևույթ թերությունների և (կամ) սխալների հայտնաբերման դեպքում՝ Մասնագիտական ուսուցման մենթորի կամ համապատասխան լիազորություններ ունեցող այլ անձի օգնությամբ, ողջամիտ ժամկետում վերացնել այդ թերությունները և (կամ) ուղղել սխալները,

5) Գործատուի պահանջով՝ Պայմանագրի 6-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված դեպքերում, ներկայացնել տեղեկանք իր առողջական վիճակի մասին,

6) ձեռնարկել իրենից կախված անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ Մասնագիտական ուսուցման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գործատուի մոտ այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ աշխատանքի ընդունվելու համար, որով անցել է Մասնագիտական ուսուցումը, այդ թվում՝ Օրենսգրքի 89-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացնելով աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերը, Գործատուի հետ կնքելով աշխատանքային պայմանագիրը կամ ստանալով աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը,

7) Մասնագիտական ուսուցման ավարտից հետո Գործատուի մոտ աշխատանքի ընդունվելուց հրաժարվելու, այդ թվում՝ Պայմանագրի 24-րդ կետով սահմանված ժամկետում իր մեղքով աշխատանքի չընդունվելու կամ աշխատանքի ընդունվելուց հետո Պայմանագրի 23-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում Գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում, Պայմանագրի 25-րդ կետով նախատեսված կարգով ու պայմաններով Գործատուին հատուցել Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված Գործատուի կատարած փաստացի ծախսերը,

8) չվնասել, չխոտանել, չփչացնել և չկորցնել Գործատուի, Գործատուի աշխատողների, քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց, Մասնագիտական ուսուցումն իրականացնելու նպատակով ներգրավված այլ մասնագետների և Մասնագիտական ուսուցումն իրականացնող կազմակերպության գույքը, առանց Գործատուի թույլտվության Մասնագիտական ուսուցման վայրից չհանել Գործատուի գույքը,

9) չդրսևորել այնպիսի վարքագիծ, որի հետևանքով կվտանգվեն Գործատուի աշխատողների կամ այլ անձանց կյանքն ու առողջությունը, կամ նրանց կյանքի և առողջության համար կստեղծվի իրական սպառնալիք կամ նրանց կյանքին ու առողջությանը կպատճառվի վնաս,

10) Գործատուի և (կամ) Գործատուի աշխատողների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց և (կամ) Մասնագիտական ուսուցումն իրականացնելու նպատակով ներգրավված այլ մասնագետների և (կամ) Մասնագիտական ուսուցումն իրականացնող կազմակերպության գույքին, ինչպես նաև Գործատուի աշխատողների կամ այլ անձանց կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

11) չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կարող են վնասել Գործատուի գործարար համբավին և հեղինակությանը, հարգանքով վերաբերվել Գործատուի աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցողներին, Մասնագիտական ուսուցումն իրականացնելու նպատակով ներգրավված մասնագետներին և այլ անձանց,

12) Մասնագիտական ուսուցման վայր չներկայանալ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ, ինչպես նաև չօգտագործել դրանք Մասնագիտական ուսուցման վայրում,

13) Պայմանագրի 12-րդ և 13-րդ կետերով սահմանված՝ Մասնագիտական ուսուցման ժամերին չզբաղվել անձնական բնույթ ունեցող կամ կողմնակի այլ հարցերով, այդ ժամանակահատվածն օգտագործել նպատակային կերպով,

14) պահպանել Մասնագիտական ուսուցման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ գաղտնիք համարվող տեղեկությունները և (կամ) այն տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ, ինչպես նաև Գործատուի աշխատողների, ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին ձեռք բերված տեղեկատվության գաղտնիությունը՝ չհրապարակելով և (կամ) որևէ կերպ հասանելի չդարձնելով դրանք երրորդ անձանց համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

15) Մասնագիտական ուսուցման ավարտին Գործատուին վերադարձնել վերջինիս կողմից իրեն տրամադրած աշխատանքի միջոցները, սարքավորումները, գործիքները, ապրանքները, դրանց նմուշները, նյութերը, փաստաթղթերը և այլ իրերը, ուսումնառության նպատակով Գործատուից ստացված դասագրքերը, ձեռնարկները և ուսումնական այլ նյութերը, աշխատանքի արդյունքում կամ Գործատուի գույքն օգտագործելիս ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտը, բացառությամբ այն հումքի, կիսաֆաբրիկատների կամ այլ նյութերի, որոնք Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, Աշակերտի կողմից արդեն իսկ օգտագործվել և սպառվել են Մասնագիտական ուսուցման շրջանակներում աշխատանքային գործառույթների կամ գործնական առաջադրանքների կատարման նպատակով,

16) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

IV. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

10. Մասնագիտական ուսուցման ընդհանուր տևողությունը կազմում է
---------- :
ժամկետը՝ օրերով կամ ամսով (ամիսներով)՝ թվերով և բառերով

Մասնագիտական ուսուցումը սկսվում է
---------- թ.
օրը, ամիսը, տարին

և ավարտվում ---------- թ. :
օրը, ամիսը, տարին

Մասնագիտական ուսուցման վերջին օրը ---------- -ն է :
տարին, ամիսը, օրը

11. Յուրաքանչյուր օրվա ընթացքում Մասնագիտական ուսուցման, ներառյալ՝ Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի կողմից աշխատանքային գործառույթների կատարման տևողությունը չի կարող գերազանցել ութ ժամը, իսկ շաբաթվա ընթացքում՝ քառասուն ժամը: Պայմանագրի կնքման պահին Աշակերտի տասնութ տարեկանը լրացած չլինելու դեպքում, Մասնագիտական ուսուցման, ներառյալ՝ Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի կողմից աշխատանքային գործառույթների կատարման տևողությունը սահմանվում է Օրենսգրքի 140-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան:

12. Առաջնորդվելով Պայմանագրի 11-րդ կետով, Կողմերը համաձայնվում են, որ Մասնագիտական ուսուցումը, ներառյալ՝ Մասնագիտական ուսուցման շրջանակներում Աշակերտի կողմից աշխատանքային գործառույթների կատարումը, իրականացվում է շաբաթական ------ օր, օրական ---------- ժամ և շաբաթական ------- ժամ տևողությամբ: Շաբաթվա այդ օրերը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Աշակերտի տասնութ տարեկանը լրացած չլինելու դեպքում, Մասնագիտական ուսուցումը չի իրականացվում Օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված հանգստյան օրերին, ինչպես նաև ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին:

13. Մասնագիտական ուսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա » պարբերությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում, Մասնագիտական ուսուցումը սկսելու և ավարտելու ժամերը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այն դեպքում, երբ Մասնագիտական ուսուցումն իրականացվում է այլ կազմակերպության կողմից, ապա Մասնագիտական ուսուցումը սկսելու և ավարտելու ժամերը կարող են որոշվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե դրանք սահմանված չեն Մասնագիտական ուսուցումն իրականացվող կազմակերպության կողմից կամ այլ բան սահմանված չէ Գործատուի և Մասնագիտական ուսուցումն իրականացվող կազմակերպության համաձայնությամբ:

14. Մասնագիտական ուսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա » պարբերությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում, հանգստի և սնվելու

համար Աշակերտին տրամադրվում է ընդմիջում՝ Գործատուի աշխատողների հանգստի և սնվելու համար նախատեսված ընդմիջման ժամերին և նույն տևողությամբ, որը սակայն չի կարող լինել երկու ժամից ավելի կամ երեսուն րոպեից պակաս: Այն դեպքում, երբ Գործատուի աշխատողների հանգստի և սնվելու համար ընդմիջման սկիզբը նախատեսված է ավելի ուշ ժամի, քան Պայմանագրի 13-րդ կետի համաձայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված՝ Մասնագիտական ուսուցման ավարտի ժամն է, ապա Աշակերտին հանգստի և սնվելու համար ընդմիջումը տրամադրվում է Կողմերի համաձայնությամբ սահմանված այլ ժամանակահատվածում՝ երեսուն րոպե տևողությամբ, եթե Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված չէ հանգստի և սնվելու համար ընդմիջման առավել երկար տևողություն: Հանգստի և սնվելու համար ընդմիջման ժամանակահատվածն Աշակերտն օգտագործում է իր հայեցողությամբ և կարող է բացակայել Մասնագիտական ուսուցման վայրից:

15. Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում, Աշակերտին հանգստի և սնվելու համար ընդմիջում տրամադրվում է այդ կազմակերպության կողմից սահմանված ժամերին և տևողությամբ, բայց ոչ ուշ, քան Մասնագիտական ուսուցումը սկսելուց 4 ժամ հետո, երկու ժամից ոչ ավելի և երեսուն րոպեից ոչ պակաս տևողությամբ:

16. Մասնագիտական ուսուցման ընթացքում Աշակերտի վրա տարածվում են ամենօրյա և ամենշաբաթյա անընդմեջ հանգստի նվազագույն տևողությունների մասին Օրենսգրքի պահանջները:

V. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17. Մասնագիտական ուսուցման համար Աշակերտի ամսական վարձատրության չափը կազմում է

---------- (----------) ՀՀ դրամ, ներառյալ
թվերով բառերով)

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարումները:

18. Յուրաքանչյուր ամսվա համար Պայմանագրի 17-րդ կետով սահմանված գումարը Գործատուն Աշակերտին վճարում է տվյալ ամսվա ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

19. Այն դեպքում, երբ Մասնագիտական ուսուցման ընդհանուր տևողությունը պակաս է մեկ ամսից, ապա Աշակերտին վճարման ենթակա վարձատրության չափը որոշվում է Պայմանագրի 17-րդ կետով սահմանված գումարը Մասնագիտական ուսուցման օրերի թվի վրա բաժանելու միջոցով:

20. Պայմանագրի վաղաժամկետ լուծման, այդ թվում՝ Գործատուի կողմից Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում, Գործատուն Աշակերտին վճարում է Պայմանագրի 17-րդ կետով սահմանված գումարի այն մասը, որը համապատասխանում է մինչ Պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ Պայմանագրի կատարումից Գործատուի հրաժարման մասին Աշակերտի տեղեկություն ստանալը Մասնագիտական ուսուցման

օրերի քանակին, ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Մասնագիտական ուսուցման օրերում չեն հաշվարկվում այն օրերը, երբ Աշակերտը չի ներկայացել Մասնագիտական ուսուցման վայր: Պայմանագրի վաղաժամկետ լուծման, այդ թվում՝ Գործատուի կողմից Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում, Գործատուի կողմից Աշակերտին նախորդ ամսվա (ամիսների) համար արդեն իսկ վճարված վարձատրությունը ենթակա չէ վերադարձման՝ անկախ այդ ժամանակահատվածում Աշակերտի բացակայության օրերի քանակից:

21. Պայմանագրի 17-րդ կետում նշված գումարը վճարվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, փոխանցվելով Աշակերտի՝ Պայմանագրի XII բաժնում նշված բանկային հաշվեհամարին:

VI. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Աշակերտը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում,

1) վերջինիս պահանջով՝ ըստ անհրաժեշտության, տվյալ կազմակերպության հետ կնքի Մասնագիտական ուսուցման ընթացքում այդ կազմակերպության և Աշակերտի իրավունքներին և պարտականություններին վերաբերող համապատասխան պայմանագիր, որի պայմանները չեն կարող հակասել Պայմանագրին,

2) Մասնագիտական ուսուցման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերն անձամբ կամ Գործատուի կողմից փոխանցվեն Մասնագիտական ուսուցումն իրականացնող կազմակերպությանը:

23. Կողմերը տալիս են իրենց համաձայնությունն առ այն, որ Մասնագիտական ուսուցման ավարտից հետո, Աշակերտն առնվազն

ժամանակահատվածը՝ թվերով և բառերով

Գործատուի մոտ պետք է աշխատի այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ, որով անցել է Մասնագիտական ուսուցումը: Սույն կետով նախատեսված՝ Գործատուի մոտ Աշակերտի աշխատելու ժամանակահատվածը սկսվում է Կողմերի միջև համապատասխան աշխատանքային պայմանագիրը կնքելու կամ Աշակերտին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտն Աշակերտին հանձնելու հաջորդ օրվանից: Սույն կետով սահմանված պայմանը որևէ կերպ չի սահմանափակում կամ բացառում Գործատուի իրավունքը՝ Աշակերտի աշխատանքի ընդունվելուց հետո, սույն կետով նախատեսված ժամանակահատվածում, Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով դադարեցնելու Աշակերտի հետ ծագած աշխատանքային հարաբերությունները:

24. Կողմերը տալիս են իրենց համաձայնությունն առ այն, որ Մասնագիտական ուսուցման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կողմերի միջև պետք է կնքվի աշխատանքային պայմանագիր կամ Գործատուն պետք է ընդունի և Աշակերտին հանձնի Աշակերտին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտ: Սույն կետի համաձայն Կողմերի միջև կնքվելիք աշխատանքային պայմանագիրը կամ Գործատուի

կողմից ընդունման ենթակա՝ Աշակերտին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտը, ի թիվս Օրենսգրքով և Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ տվյալների և տեղեկությունների, պետք է պարունակի Պայմանագրի 23-րդ կետով սահմանված ժամանակահատվածում Գործատուի մոտ աշխատելու Աշակերտի պարտականությունը՝ այն մասնագիտությամբ կամ որակավորմամբ, որով Աշակերտն անցել է Մասնագիտական ուսուցումը:

25. Կողմերը համաձայնվում են, որ Մասնագիտական ուսուցումից հետո Գործատուի մոտ աշխատանքի ընդունվելուց հրաժարվելու, այդ թվում՝ Պայմանագրի 24-րդ կետով սահմանված ժամկետում Աշակերտի մեղքով աշխատանքի չընդունվելու կամ աշխատանքի ընդունվելուց հետո Պայմանագրի 23-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում Գործատուի մոտ աշխատելու պարտականությունն Աշակերտի մեղքով չկատարվելու դեպքում, Մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված Գործատուի փաստացի ծախսերն Աշակերտը հատուցում է Գործատուի պահանջով, այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ միանվագ կերպով կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ սահմանված ժամանակացույցին համապատասխան: Գործատուի փաստացի ծախսերը հատուցելուն ուղղված վճարումներն իրականացվում են ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, փոխանցվելով Գործատուի՝ Պայմանագրի XII բաժնում նշված բանկային հաշվեհամարին:

26. Պայմանագրի փոփոխման, լուծման, Պայմանագրի XII բաժնում նշված որևէ տվյալի փոփոխման, Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի, Պայմանագրի մեկնաբանման և կիրառման մասին տարաձայնությունների, ինչպես նաև Մասնագիտական ուսուցման հետ կապված ծախսերի վերաբերյալ ծանուցումների առաքումը, փաստաթղթերի և տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ Պայմանագրի XII բաժնում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ՝ ստացման մասին հետադարձ ստացականով կամ առձեռն հանձնելու և (կամ) էլեկտրոնային փոստի միջոցով՝ Կողմերի էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու միջոցով, և (կամ) էլեկտրոնային կապի այլ միջոցներով՝ ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին:

27. Պայմանագրի XII բաժնում նշված որևէ տվյալի կամ տվյալների փոփոխման դեպքում, Կողմերը պարտավոր են դրա փոփոխումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել մյուս կողմին: Սույն կետով նախատեսված պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման բացասական հետևանքների ռիսկը կրում է այդ պարտավորությունը չկատարած կողմը:

28. Մասնագիտական ուսուցումը Պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետի «բ » պարբերությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում, Գործատուի և Մասնագիտական ուսուցումն իրականացնող կազմակերպության միջև Մասնագիտական ուսուցման կազմակերպման և իրականացման հետ կապված առանձին հարաբերություններ կարող են կարգավորվել Գործատուի և Մասնագիտական ուսուցումն

իրականացնող կազմակերպության միջև կնքված համապատասխան պայմանագրով, որի պայմանները չեն կարող հակասել Պայմանագրին :

29. Պայմանագրի կնքման պահին Աշակերտի տասնութ տարեկանը լրացած չլինելու դեպքում, Պայմանագիրը կնքվում է Աշակերտի օրինական ներկայացուցիչների՝ ծնողների կամ որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, որը Գործատուին է տրամադրվում մինչ Պայմանագրի կնքումը և կցվում է Պայմանագրի՝ Գործատուի մոտ պահվող օրինակին:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

30. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ՝

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) ունեն լիարժեք լիազորություններ և իրավասություն Պայմանագրի կնքման համար, օժտված են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար բոլոր իրավունքներով և իրավասություններով,

4) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

5) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

6) իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման իրավական հետևանքները և համապատասխանում են Կողմերի կամահայտնությանը:

31. Ի լրումն Պայմանագրի 30-րդ կետի, Գործատուն հավաստիացնում և երաշխավորում է, որ

1) Պայմանագրի կնքման պահին իրեն հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է խոչընդոտել Մասնագիտական ուսուցումից հետո Աշակերտին իր մոտ աշխատանքի ընդունելուն և առնվազն Պայմանագրով սահմանված ժամանակահատվածով վերջինիս աշխատելուն,

2) Մասնագիտական ուսուցումն այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում, վերջինիս կողմից Մասնագիտական ուսուցումն իրականացվելու է պատշաճ կերպով և Պայմանագրի 7-րդ կետի 3-րդ ենթակետի «բ»-«զ» պարբերությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:

32. Ի լրումն Պայմանագրի 30-րդ կետի, Աշակերտը հավաստիացնում և երաշխավորում է, որ

1) Պայմանագրի կնքման պահին իրեն հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է խոչընդոտել իրեն՝ Մասնագիտական ուսուցումից հետո Գործատուի մոտ աշխատանքի ընդունվելու և առնվազն Պայմանագրով սահմանված ժամանակահատվածում աշխատելու համար,

2) իր իրավասությունների շրջանակներում կձեռնարկի իրենից կախված անհրաժեշտ բոլոր միջոցները Մասնագիտական ուսուցումն արդյունավետ անցկացնելու, մասնագիտական գիտելիքներ և գործնական հմտություններ ձեռք բերելու, դրանք լրացնելու ու կատարելագործելու համար:

VIII. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

33. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, համաճարակները, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:
Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է ---------- օրից ավելի,

օրերի քանակը բառերով

ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել
Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս կողմին:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու համար:
35. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը, Պայմանագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
36. Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում այն պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, որոնք Կողմերը պետք է կատարեին, սակայն չեն իրականացրել Պայմանագրով սահմանված ժամկետներում:

X. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

37. Պայմանագիրը կարող է փոփոխվել և վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

38. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

39. Գործատուն իրավասու է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց, եթե Աշակերտը՝

1) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

2) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է Գործատուի կամ Գործատուի աշխատողների կամ քաղաքացիաիրավական պայմանագրերով Գործատուին ծառայություններ մատուցող անձանց համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը, որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում (այդ թվում՝ ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում) կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են Գործատուի բնականոն աշխատանքը.

3) Մասնագիտական ուսուցման վայրում ավելի քան մեկ անգամ գտնվել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ.

4) հրապարակել է կամ երրորդ անձանց հայտնել կամ որևէ այլ կերպ հասանելի է դարձրել Մասնագիտական ուսուցման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ գաղտնիք համարվող տեղեկությունները և (կամ) այն տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ.

5) պարբերաբար խախտել է Պայմանագրի 9-րդ կետի 1-ին, 2-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերով սահմանված պահանջները կամ դրանցից որևէ մեկը.

6) Պայմանագրի կնքման համար ներկայացրել է սխալ կամ կեղծ տեղեկություններ և (կամ) փաստաթղթեր:

40. Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում, Գործատուն այդ մասին Աշակերտին տեղեկացնում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ Պայմանագրի 26-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան:

41. Պայմանագրի 39-րդ կետով սահմանված դեպքերում Պայմանագրի կատարումից Գործատուի միակողմանի հրաժարվելու դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված:

42. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ: Սույն կետով նախատեսված դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված այն օրը, երբ

Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու առաջարկությունը ներկայացրած կողմը մյուս կողմից ստանում է այդ մասին համաձայնությունը, եթե Պայմանագրի վաղաժամկետ լուծման այլ ժամկետ չի սահմանվում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

XI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

43. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:
44. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, կատարման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
45. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով որոշված պարտավորությունների կատարման ավարտը:
46. Պայմանագիրը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրի հաշվառման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Գործատուի հաշվին:
47. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մեկ օրինակը ներկայացվում է Պայմանագրի հաշվառումն իրականացնող իրավասու մարմնին, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրի հաշվառման կարգը սահմանող նորմատիվ իրավական ակտով :

XII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործատու՝	**Աշակերտ՝**
---	---
անվանումը (կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը)	անունը, ազգանունը
Ծանուցման հասցե՝	**Ծանուցման հասցե՝**
---	---
Էլ. Փոստ ---	**Էլ. Փոստ** ---
Հեռ. կամ էլեկտրոնային կապի այլ միջոց ---	**Հեռ. կամ էլեկտրոնային կապի այլ միջոց** ---
Հ/h ---	**Հ/h** ---
առևտրային բանկի անվանումը, հաշվարկային հաշիվը	առևտրային բանկի անվանումը, հաշվարկային հաշիվը

Ի դեմս՝

Պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը,
անունը, ազգանունը

--- ---

ստորագրություն ստորագրություն

Հայաստանում աշխատուժի զարգացման» հնգամյա ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից և իրականացվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և կոնսորցիումի գործընկերների՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Հայ օգնության ֆոնդի և ՍԻՎԻՏՏԱ Հայաստանի կողմից: Ծրագիրը նպատակ ունի շուրջ 10 000 երիտասարդի, այդ թվում՝ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց, զինել աշխատաշուկայում պահանջարկ վայելող աշխատանքային հմտություններով: